

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարության

«Երևանի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158

հիմնական դպրոց »   ՊՈԱԿ-ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ  ԾՐԱԳԻՐ

2023_2028թթ.

ԴՊՐՈՑԻ  ՏՆՕՐԵՆԻ  ՊԱՇՏՈՆԻ  ՀԱՎԱԿՆՈՐԴ ՝

ԱՍՏՂԻԿ  ԱՆԴՐԱՆԻԿԻ  ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ  2023

# ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

*Նախաբան----------------------------------------------------------------------*

1. *Երևանի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոցի առաքելությունը*
2. *Հաստատության գործունեությունը.*
3. *Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ տեղերը.*
4. *Նպատակների և խնդիրների սահմանումը.*
5. *Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.*
6. *Պատասխանատուները.*
7. *Արդյունքների գնահատման չափանիշները.*
8. *Ռիսկերը.*
9. *Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.*
10. *Վերահսկողության մեխանիզմները:*

## *Նախաբան*

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է , որի գլխավոր նպատակն է՝ գիտելիքի, մշակույթի, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ քաղաքացի:

Այսօր ականատես ենք մարդկային կյանքի ամենանշանակալի իրադարձություններից մեկի՝ նոր հասարակության ձևավորմանը: Եվ այսօր խոսել կրթության մասին, նախևառաջ, նշանակում է խոսել այն մասին, թե ինչպիսի քաղաքացի ու անհատ ենք ուզում ձևավորել կամ համարժեք հարցադրումը՝ ի՞նչ ենք այսօր հասկանում կրթություն ասելով և պատահական չէ, որ մեր հանրապետությունում կրթական բարեփոխումների հիմնական շեշտը դրվեց հենց կրթության բովանդակության մյուս բաղադրիչների՝ կարողություններ, հմտություններ, արժեքային համակարգ և դիրքորոշում և վերաբերմունք բաղադրիչների վրա, որը կոչվում է կարողունակություն՝ կոմպետենցիա:

Անհնար է ապահովել արդյունավետ կրթություն՝ առանց հասկանալու ու հաշվի առնելու թե, ինչ է կատարվում այսօրվա երեխայի հետ, որն է նրա «աշխարհը»: Անհրաժեշտություն է. «յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում»:

Դպրոցի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԴԶԾ) արտացոլում է տվյալ դպրոցի զարգացման առնվազն 5 տարվա տեսլականը: Այն սահմանում է կոնկրետ նպատակներ և խնդիրներ, պլանավորում է այն կարևոր գործողություններն ու միջոցառումները, որոնք կնպաստեն սահմանված նպատակների աստիճանական իրականացմանը: ԴԶԾ-ն էապես տարբերվում է դպրոցի աշխատանքային պլանից, քանի որ այստեղ ներկայացված են ոչ թե ընթացիկ խնդիրները, այլ հանդես է գալիս

որպես դպրոցի ռազմավարության պլանավորում, որն ուղղված է դեպի ապագան և ունի նորարարական ուղղվածություն:

«Երևանի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. Ծրագրի հիմքում դրվել են ՀՀ Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը:

<<Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց , որը նպատակաուղղված է երեխայի՝ սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը>>:

Հիմնական դպրոցի առաքելությունը սովորողներին ազգային հենքի վրա տարրական և հիմնական որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել ավագ դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում:

## *1. Երևանի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոցի առաքելությունը*

1. Ապահովել կրթական միջավայր յուրաքանչյուր սովորողի համար, անկախ նրա ընդունակությունների և կարողությունների:
2. Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրում, որը որակյալ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ պայման է :
3. Յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ անհրաժեշտ ուշադրության ապահովում:
4. Այնպիսի պայմանների ստեղծում, որտեղ յուրաքանչյուր սովորող որոշակի ոլորտում կարող է ինքնահաստատվել:
5. Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակույթային կենտրոն հանդիսացող դպրոց:
6. Օժտված երեխաների տարբերակված խորացված ուսուցման կազմակերպման համար ստեղծել բարենպաստ պայմաններ:
7. Յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը: Դպրոցը պետք է կրթական երեք աստիճաններում ապահովի ԿԱՊԿՈՒ սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը:

## 2 . ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### Ուսումնական հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ

«Երևանի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ը հիմնադրվելէ 1973թ.-ին Շենգավիթ վարչական տարածքի Չարբախ թաղամասում, ունի յոթ մասնաշենք: 1990թ.-ից կրթօջախի մանկավարժական կոլեկտիվի ցանկությամբ անվանակոչվել է ՀՀ ազգային հերոս, դպրոցի լավագույն սան Մովսես Գորգիսյանի անունով: 1973թ.-ից մինչ օրս «Երևանի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ը հիմնավերանորոգման ենթարկվել է մասնակի: Տարիների ընթացքում կատարվել են կոսմետիկ շինարարական աշխատանքներ: 50 տարիների ընթացքում դպրոցը տվել է հազարավոր շրջանավարտներ, որոնք իրենց արժանի տեղն են զրավել գիտության, արվեստի և հասարակական-քաղաքական ոլորտներում: Այսպես՝ դպրոցի շրջանավարտներն են ՀՀ ազգային հերոս, դպրոցի լավագույն սան Մովսես Գորգիսյանը, վաստակաշատ երգչուհի Աիդա Սարգսյանը, հաղորդավար Հրաչ Մուրադյանը և շատ ու շատ ուրիշներ: Հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության նախագծային հզորությանը և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:

Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է նախազծային և սահմանված նորմերին:

Տրված լիցենզիաների համաձայն դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ հանրակրթական ծրագրերը.

- Տարրական (ընդհանուր՝ 1-ին աստիճան) – լիցենզիա N 1022 10.04.2009թ.
- Հիմնական (ընդհանուր՝ 2-րդ աստիճան) – լիցենզիա N 1023 10.04.2009թ.
- 03.05.2019թ–ի (սահմանային թվի փոփոխություն) N 447-Ա/2 լիցենզիայի համաձայն.

Տարական ընդհանուր կրթություն կարող են իրականացնել թվով 350 աշակերտ, իսկ հիմնական ընդհանուր կրթություն՝ 400 թվով աշակերտ: Լիցենզիայով սահմանված է 750 աշակերտի համար և այս դրությամբ դպրոցն ունի 723 աշակերտ:

Ուսումնական գործընթացը կազմակերպելիս դպրոցը հիմնվում է հանրակրթական պետական չափորոշչի ու պետական ծրագրերի վրա: Դպրոցի մանկավարժական համակազմը բաղկացած է համապատասխան որակավորում ունեցող մասնագետներից:

Դպրոցի աշխատակազմը բաղկացած է 42 աշխատողներից, որից՝ 5-ը վարչական աշխատող, 32՝ մանկավարժ:

Առաջիկայում անհրաժեշտ է դիտարկել անձնակազմի երիտասարդացման խնդիրը: Ուսուցիչների կայուն, չփոփոխվող կազմը պայմանավորված է գործող ուսուցիչների բարձր մասնագիտական որակներով, ինչպես նաև աշակերտների թվի բնական աճով:

2023-2024 ուստարում դպրոցում ձևավորված 25 դասարաններում սովորում են 1-9-րդ դասարանների 723 աշակերտ, որից ԿԱՊԿՈՒ՝ 6 աշակերտ:

Դպրոցի դասերը կազմակերպվում են միահերթ՝ 5-օրյա աշխատանքային կարգացույցով:

Դպրոցում գործում է երկարօրյա խումբ, որի նպատակահարմարությունը վկայում են բազմաթիվ ծնողներ:

Դպրոցը և առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) նախաձեռնել և իրականացնում են «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների հիմնման կրթական ծրագիրը (խմբակը գործում է անվճար):

Հաստատության սովորողները «ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անց են կացնում հաստատության մարզադահլիճում:

Դպրոցում առկա է 25 դասասենյակ, երեք վարչական սենյակ, մեկ ուսուցչանոց, ԿԱՊԿՈՒ սովորողներին մասնագիտական աջակցության համար առանձին երկու սենյակներ՝ մեկ լոգոպեդի և մեկ հոգեբանի՝ համալրած դիդակտիկ համապատսխան նյութերով: Դպրոցն ունի նաև ՆԶՊ կահավորված կաբինետ, վեց առարկայական կաբինետներ,համապատասխան գույքով, երեք լաբարատորիա՝ կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի, որոնք կարիք ունեն վերանորոգման և գույքի թարմացման, մեկ համակարգչային կաբինետ տաս և ավելի համակարգչով համալրած, երկու

պրոյեկցիոն սարք, հանդիսությունների սրահ կահավորված, մեկ ճաշարան (վերանորոգում և կահավորում չկա), մեկ բուֆետ և բուժկետ: Դպրոցի շենքում առկա է 10 սանհանգույց , որը գտնվում է բարվոք վիճակում: Տարածքը ցանկապատված է: Շենքը կարիք ունի հիմնանորոգման: Հոսանքի լարերը փոխված են: Կոյուղագծերը և ջրագծերը գտնվում են բարվոք վիճակում,խմելու ջուրը շուրջօրյա է: Շենքը ունի լոկալ ջեռուցում: Ամբողջ դպրոցի նկուղային հատվածից 500 քմ. Ծառայում է որպես պաստարան և գտնվում է բարվոք վիճակում:

Դպրոցն ունի բավականին հագեցած գրքերով գրադարան: Գրադարանն ապահովված է դասագրքերով, գեղարվեստական և ծրագրային գրականությամբ՝ մոտ 5000 գիրք, սակայն կարիք կա ցանկը համալրելու նոր հեղինակների գրքերով, մեծացնել գրադարանի տարածքը, կահավորել համապատասխան գույքով՝ստեղծելով ընդարցակ ընթերցասրահ:

Հասցե: ք. Երևան, Երևան Շենգավիթ վարչական շրջան, Շիրակի 2-րդ նրբանցք, 5 շենք

**Հեռախոս:** 010 46-04-14

**Էլեկտրոնային հասցե**: 158dproc@mail.ru

**Դպրոցի կայք-էջ**: https:// yerevan158.schoolsite.am

## 3 . Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ տեղերը.

| *Ուժեղ կողմեր* | *Թույլ կողմեր* |
|---|---|
| ***1. Աշխատակազմի գործունեության և ուսուցչական համակազմի ուժեղ կողմերը :***<br><br>Վարչական մասում<br>• Բարձր պատասխանատվություն,<br>• թիմային, համագործակցային աշխատանք,<br>• աշխատանքային փորձ,<br>• կրթական անկաշկանդ միջավայրի ապահովվում:<br>Ուսումնաօժանդակ մասում<br>• Պարտաճանաչություն,<br>• պատասխանատվություն,<br>• մարդասիրական վեհ զգացումներ:<br>Ուսուցչական կազմում<br>• Մասնագիտական բարձր որակ,<br>• մանկավարժական հմտություններ,<br>• աշակերտի հաջողության գնահատում և տարածում:<br>• Ընդգրկված են առարկայական մեթոդմիավորումներում, համատեղում են հին և նոր մեթոդները:<br>• Տարվա ընթացքում կազմակերպում են այցելություններ ՀՀ պատմա-մշակութային հուշարձաններ, թանգարաններ:<br>• Ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստող գերազանց պայմաններ.<br>ա/ դասղեկների և զինղեկի արդյունավետ համագործակցությունը բ/պետական և ազգային տոների նշում:<br>• Սերնդեսերունդ փոխանցվող հայ դպրոցի ավանդույթներ: | ***1. Աշխատակազմի և ուսուցչական համակազմի գործունեության թույլ կողմեր:***<br>Վարչական մասում<br>• Վարչական աշխատանքի համատեղումը մասնագիտականի հետ:<br>• Որոշ աշակերտների և ծնողների անտարբերությունը:<br>Ուսուցչական կազմում<br>• Տարրակարգ ունեցող ուսուցիչներ, երիտասարդ ուսուցիչներ:<br>• Կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչներ չկան:<br>• Ուսուցիչների կողմից հետազոտական և նախագծային աշխատանքներ չեն իրականացվում:<br>***2. Սովորողների ուսումնառության և դաստիարակության թույլ կողմերը:***<br>• Օլիմպիական խմբակներում սովորողների թվի սակավություն:<br>• Մրցակցություն ոչ թե գիտելիքի, այլ գնահատականի համար:<br>• Դպրոցի աշակերտները մեծ ակտիվություն չեն ցուցաբերում դպրոցական ու տարածքային առարկայական օլիմպիադաներին:Դպրոցի զարգացման ծրագրում խնդիր է դրված ապահովել սովորողների մասնակցության աճ մարզային, հանրապետական օիմպիադաներում:<br>• էլեկտրոնային գրատախտակի բացակայություն: |

| | |
|---|---|
| ***2. Սովորողների ուսումնառության և դաստիարակության ուժեղ կողմերը:***<br>• Գիտելիքների ձեռքբերման ձգտում,<br>• ակտիվ մասնակցություն մշակութային գործընթացին:<br>• Աշակերտական խորհրդի ակտիվ գործունեության ծավալում:<br>• Տարրական դասարաններում ուսման որակի բարձր մակարդակ:<br>•Հայրենասիրական դաստիարակության սերմանում և պահպանում:<br>• Դաս-միջոցառումների ակտիվ մասնակցություն :<br>***3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմերը:***<br>• Երեխաների՝ կրթության հանդեպ մեծ պատասխանատվություն և օժանդակություն,<br>• կրթական և ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում,<br>• դպրոցական միջոցառումներին ակտիվ մասնակցություն:<br>• «Ծնողական խորհրդի» ակտիվ գործունեություն:<br><br>***4.Ռեսուրսներով ապահովվածությունը:***<br>• Բանիմաց մանկավարժներ, բավարար ֆինանսական միջոցներ:<br>• Դպրոցն ապահովված է կադրային ռեսուրսներով<br>• Գրադարանն ապահովված է դասագրքերով, գեղարվեստական գրքերով, մեթոդական գրականությամբ և քարտեզներով:<br>• Դպրոցն ունի ՆԶՊ առանձին կաբինետ: • «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի առկայություն:<br>• Քիմիա, ֆիզիկա և կենսաբանության լաբորատոր դասասենյակներ:<br>• Գույքով ապահովված գրադարան: | • Ընդարձակ գրադարանի և ընթերցասրահի բացակայություն:<br>• Օդամղիչ հրացանների հրաձգարանի բացակայություն:<br>•Ուսումնական տարավա վերջում ստեղծել անվճար նախակրթարան ուսումնական հաստատություն ընդունվող փոքրիների համար:<br>• ***Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմերը:***<br><br>•Շրջանավարտների խորհուրդի բացակայություն:<br>•Պասիվ համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ:<br>• Դպրոցի աշխատանքներին լիարժեք մասնակցության հնարավորության բացակայություն կապված ծնողների և կառավարման խորհրդի աշխատանքային գործնեությամբ:<br>***4.Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները:***<br>• Լեզուների ուսուցման լինգաֆոնային կաբինետի բացակայություն<br>• Ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների մասնակի պակաս:<br>• Դպրոցի նյութատեխնիկական բազայի, գույք-սարքավորումների և նորագույն տեխնիկայի սակավություն:<br>•Գրադարան, որն ունի վերանորոգման, կահավորման և տարածքի ընդլայնման կարիք, գրադարանում չկա էլեկտրոնային գրադարան, պրոյեկտոր:<br>• Քիմիա, Ֆիզիկա և կենսաբանություն առարկաների լաբորատորիաների |

| | |
|---|---|
| • Շենքային բավարար պայմաններ:<br><br>*Հնարավորություններ*<br><br>• Նախկին շրջավարտների ներգրավում դպրոցի գործունեությանը,<br>• ծնողական համայնքի հնարավորությունների առավել օգտագործում: | վերանորոգում,գույքի թարմացում,սարքերի համալրում :<br>• Երկարօրյա ուսուցման դասասենյակի կահավորում:<br><br>*Վտանգներ*<br><br>• Դպրոցի առաջին հարկերում շարժական վանդակաճաղերի բացակայություն,<br>• արտակարգ իրավիճակների ժամանակ դպրոցի ռեսուրսների սակավություն:<br>• մարզադահլիճի և հանդերձարանների բարեկարգման կարիք: |

## *Դպրոցի գործունեության վերլուծություն և նպատակադրման ոլորտները*

### *Դպրոցի շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան*

Հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար: Դպրոցի տարածքը գտնվում է ավտոմանապարհային գոտուց բավարար հեռավորության վրա: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:

Տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում հաստատության տարածքից: Ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:

Դպրոցն ունի ընդարձակ և լուսավոր դասասենյակներ, նախասրահ,միջանցքները ջեռուցվում են և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

Հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին.

- շենքում առկա են դեպի դուրս բացվող 3 պահուստային ելքեր,
- հաստատությունն ապահոված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով,
- բոլոր դռները լայն են և հարմարավետ ԿԱՊԿՈՒ աշակերտների տեղաշարժման համար,
- հաստատությունն ապահոված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով ,
- դպրոցի տանիքը պատված է հրակայուն նյութերով :

Բացի այդ հաստատության շենքի անվտանգությանը անդրադառնալիս, նկարագրվել է իրավիճակը՝ ըստ ներքոնշյալ նորմերի՝

- հաստատությունում ոչ կառուցվածքային վտանգներ չկան, մասնավորապես՝

- ✓ համակարգչային սարքավորումները, հեռուստացույցները ամուր են տեղադրված են և ամրացված աշխատատեղերին,
- ✓ դպրոցում չկան անիվներով տեղաշարժվող ծանր իրեր,
- ✓ դպրոցական կահույքի վրա չեն դրվում ծաղկամաններ, նկարներ և ծանր իրեր

- դպրոցական միջանցքների հատակները սայթաքուն չեն,
- հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:

Հաստատությունում մշակված և առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան:

Հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով:

Հաստատության տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:
Դպրոցի շենքը կառուցվել է 1973թ. և մինչ օրս հիմնավերանորոգման ենթարկվել է մասնակի: Տարիների ընթացքում կատարվել են կոսմետիկ շինարարական աշխատանքներ, փոխվել են զուգարանակոնքերը, լվացարանները:
Հաստատության շենքը կայուն է վտանգների ազդեցությանը՝ ուժեղ քամիներ, հրդեհներ, խոնավություն և այլն, սեյսմակայունությունն ամրապնդելու կարիք ունի:

Դպրոցի բոլոր դասասենյակները, կաբինետները և միջանցքներն ունեն ուղիղ, անմիջական բնական լուսավորություն:

Սեղանների շարքերի միջև հեռավորությունը 1մ-ից ոչ պակաս է:

Ուսումնական սենյակներում սեղանները տեղադրված են լուսակիր պատի ուղղությամբ, պարտադիր ձախակողմյան լուսավորությամբ:

Երկտեղանոց սեղանները տեղադրված են 3 շարքով, որը թույլ է տալիս ապահովել դասարաններում աշակերտների սահմանային խտությանը համապատասխան կահավորում: Խմբային աշխատանքներ կամ ՏՀՏ դասեր կազմակերպելիս ուսուցիչները դասավորում են դասասենյակը նախապես, հետևապես կարելի է ասել դպրոցի նախագծային հզորությունը լիովին է գործում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցիչների կողմից իրագործվում են ուսումնական ծրագրերից բխող համագործակցային,նորարարական մեթոդների օգնությամբ ուսումնական գործընթաց:

Դպրոցում ջրամատակարարումը շուրջօրյա է, և խստորեն պահպանվում են բոլոր սանիտարահիգիենիկ պահանջները:

Դպրոցում գործել է բուֆետ, որը աշխատել է ժամը 8-ից 15-ը, ապահովում աշակերտների և աշխատակազմի սննդի կազմակեպման հարցը: Սննդի կետը հագեցված է անհրաժեշտ գույքով և պարագաներով, այնտեղ փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ: 2020-2023թթ.համաճարակի հետ կապված բուֆետը չի գործել:

Բուժկետը գործում է հաստատության աշխատանքային ռեժիմին համապատասխան և պատրաստ է տրամադրված միջոցներով ցուցաբերել առաջին բուժօգնություն աշակերտներին և աշխատակազմին: Դպրոցի տարհանման

գործարկման պլանում ընդգրկված է նաև բուժքույրը և բացատրական աշխատանքներ է տանում սովորողների շրջանում: Բուժքույրը պարբերաբար իրազեկում է սպասվելիք պատվաստումների,վարակների բռնկման վտանգների և կանխարգելման աշխատանքների մասին: Բուժկետում վարվում է սովորողների և աշխատակիցների առողջության մատյան,առկա են համապատասխան բժշկական տեղեկանքները և սանիտարական գրքույկները: Դպրոցն ունի գործող և բավարար ֆիզիկական պայմաններով գրադարան, որը հագեցած է անհրաժեշտ ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքը կարիք ունի նորացման հաստատությունն ունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության, ռազմագիտության, համակարգչային և այլն, ինչպես նաև արհեստանոց, սպորտդահլիճ, միջոցառումների դահլիճ և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ/սենյակներ, ներառյալ արտադպրոցական կրթության և լրացուցիչ կրթական ծրագերի համար որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով և ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով:

Հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով: Հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և ապահովված են հիգիենայի պարագաներով (օճառով, թղթով և այլն):Դպրոցի զարգացման ծրագրի նպատակների իրագործման համար ֆինանսական կարիքները բարելավվելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել վճարովի լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումը, հաշվի առնելով թե սովորողների, թե մանկավարժների առաջարկներն ու ցանկությունները, ինչպես նաև օգտվելով օրենքով ընձեռված հնարավորություններից՝ ներգրավել կրթական ոլորտով զբաղվող ՀՀ և օտարերկրյա բարեգործական կազմակերպություններն ու անհատներին:

*Դպրոցի խորհրդակցական մարմինները*

Կրթական գործունեությունն արդյունավետ իրականացնելուն նպաստում են դպրոցում գործող խորհրդակցական մարմինները՝ մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդները և աշակերտական խորհուրդ:

Հիմք ընդունելով ՀՀ օրինակելի կանոնադրության դրույթները՝ բոլոր խորհրդակցական մարմինները պետք է մշակեն իրենց ներքին կանոնադրությունը, որը պետք է համապատասխանի դպրոցի և համայնքի պահանջներին և հնարավորություններին, և բխի աշակերտների շահերից: Ինքս կարևորում եմ բոլոր խորհուրդների ինքնավար գործունեությունը, իրենց գործողություններում ազատ լինելու հնարավորությունը: Խորհրդակցական մարմինների ճիշտ, դրական, անկողմնակալ և նվիրված աշխատանքի արդյունավետությունից է կախված դպրոցի ընդհանուր վարկանիշը: Շատ կարևոր է, որ խորհրդակցական մարմիններն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

**Աշակերտական համակազմը**

Դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ տարածքում բնակվող երեխաներին (սովորողներին) ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ:

Դպրոցի պարտականությունն է զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների նախնական գիտելիքները որոշելու, սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար, դպրոցում ներդնել հոգեբանական ծառայություն՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:

Աշակերտական խորհրդի աշխատանքը նպաստում է աշակերտների մասնակցությանը և ընդգրկվածությանը ուսումնական գործընթացի բարելավմանը, ներդպրոցական խնդիրների վերհանմանն ու լուծմանը, համայնքային զարգացման հարցերին: Անհրաժեշտություն կա ստեղծելու նաև շրջանավարտների խորհուրդ, որոնք կնպաստեն դպրոցի զարգացման ծրագրերի իրականացմանը:

## Մանկավարժական համակազմը

Հայաստանի Հանրապետության առաջնահերթ մարտահրավերները ուղղված է կրթության ոլորտին:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարում ենք դպրոցի ռազմավարություններից մեկը, որի իրականացումը ենթադրում է.

- Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:
- Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:
- Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ:
- Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:
- Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել ոչ միայն նոր համակարգիչներ, այլև էլեկտրոնային գրատախտակ:

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է:

Կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է: Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակն ընդգրկում է.

ա/ կրթական չափորոշիչների և բարելավված ծրագրերի հետագա կատարելագործում

ու ներդրում, ապահովելով կարողունակությունների ենթաբաղադրիչները՝ ինքնաճանաչողական, ժողովրդավարական, քաղաքացիական, մշակութային, մաթեմատիկական, գիտատեխնիկական և տնտեսական:

բ/ կրթության բոլոր մակարդակներում դաստիարակության բաղադրիչի ամրապնդում՝ պետականության դերի գիտակցման, հայրենասիրական, քաղաքացիական և էկոլոգիական ուսուցման և դաստիարակության միջոցներով բոլոր սովորողներին զինելով հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով:

1Ըստ փործարկվող չափորոշիչի պետք է հենվել հանրակրթության բովանդակակության բաղադրիչների վրա, որը համախմբվում է կոմպետեցիա /կարողունակություն/ հասկացողությամբ:




Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ,

կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները, ինչպիսիք են մանկավարժական մշակույթը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը, մասնագիտական որակները, գիտելիքները, կարողությունները և հմտությունները անընդհատ թարմացման և վերանայման կարիք են զգում:

Մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները:

Պետական չափորոշիչի պահանջները, կրթական ոլորտի առաջ դրված մարտահրավերներն ու դեպի որակյալ կրթություն տանող ուղիներն են: Կոմպետենցիաների վրա հիմնված կրթակարգի առանձնահատկությունն այն է, որ ուսումնական գործընթացը պետք է նպաստի սովորողի այն որակների ձևավորմանը,որոնց հետ առնչվում է առօրյա և աշխատանքային գործունեությունը կազմակերպելիս:

Վերջնարդյունքը ոչ թե տվյալ առարկայի հաջող յուրացումն է, այլ կարողականության ձևավորումը:

## Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ և անխափան աշխատանքի նպատակով անհրաժեշտ է էլ ավելի բարելավել կրթական միջավայրը՝ այն դարձնելով առավել անվտանգ, բարեկեցիկ ու հարմարավետ յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար: Պետք է ստեղծել համապատասխան միջավայր ոչ միայն բուն կրթության, այլև հանգստի և ստեղծագործական զարգացման համար:

Դպրոցը պետք է ձգտի, որ՝

- դասասենյակները և առարկայական կաբինետները լինեն վերանորոգված և կահավորված նոր գույքով,
- ապահովված լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
- դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
- դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ):
- Հիմնական դպրոցում աշակերտին հնարավորություն տալ մասնագիտական կողմնորոշման՝ ավելացնելով խմբակների քանակը:

Ծնողների և երեխաների սոցիալական պատկերը պետք է նկարագրվի դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլվի ուսումնական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում:

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի ռազմավարական կարևորագույն խնդիրն է, քանզի կրթության գերնպատակն անձի անհատականության կայացումն է:

Դպրոցը պետք է հետևողական աշխատանք կատարի սովորողների արժեհամակարգի ձևավորման ուղղությամբ՝

- ծնողների ուսուցում կազմակերպելով,
- առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը,
- արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ուղղվածություն տալով,
- ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,

- ծնող-դպրոց կապը հզորացնելով:

Պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացում առանձնահատուկ է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ, ինքնուրույն, ազգային արժեքներ կրող քաղաքացու ձևավորումը: Պետության կայացման գործում խիստ կարևոր է համայնքային, մարզային և հանրապետական մակարդակներում որոշումներ կայացնելու գործընթացին երիտասարդների մասնակցության խթանումը, հոգեպես և ֆիզիկապես առողջ, կրթված և հայրենասեր երիտասարդություն ունենալը: Այս գործում գերակա է ուսումնական հաստատությունների դերը: Այս պայմաններում գլխավոր նպատակը սովորողներին ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիքներ հաղորդելն ու ուսուցանելն է, այլև արագ որոշումներ կայացնելու, ակտիվ հաղորդակցվելու և ողջ կյանքի ընթացքում սովորելու ունակ քաղաքացի ձևավորելն է: Այս նպատակի համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ ծրագրերը.

- հայրենասիրական դաստիարակություն
- մշակութային-ստեղծագործական զարգացում
- առողջ ապրելակերպ

## ➢ Հայրենասիրական դաստիարակություն

Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը մշտապես եղել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ պատկերացումները ճիշտ ձևավորելու, սեր արմատավորելու համար:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում անհրաժեշտ է՝

- դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- պարբերաբար համակարգել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,

• դպրոցական հիմնական բոլոր միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,

• ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների մանկավարժական առաջավոր փորձը,

• հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, էլեկտրոնային նյութեր և այլն,

• դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,

• հաճախակի անցկացնել ռազմահայրենասիրական բնույթի մրցույթներ, կլոր սեղաններ, ինտելեկտուալ մրցույթներ:

• հայտնի մարդկանց, զինվորների, հայ ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ հանդիպումները,

• հարստացնել և համալրել հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական տեղեկատվական բանկը:

## Մշակութային-ստեղծագործական զարգացում

Ուսման գործընթացի կարևորագույն գործառույթներից մեկն էլ անհատի ստեղծագործական կարողությունների և հմտությունների բացահայտումն ու զարգացումն է: Հաշվի առնելով երեխայի ստեղծագործական ներուժը և հետաքրքրությունների շրջանակը՝ անհրաժեշտ է.

- ստեղծել պայմաններ երեխայի՝ որպես անհատի ձևավորման համար՝ զարգացնելով նրա պատասխանատվության զգացումն իր արարքների և գործողությունների նկատմամբ,
- ստեղծել պայմաններ նրա ինքնարտահայտման համար՝ ապահովելով ստեղծագործական շփման միջավայր և ձևավորելով արժեքների և իդեալների բարձրաճաշակ համակարգ,
- աշակերտների պահանջմունքներին համապատասխան կազմակերպել լրացուցիչ

կրթություն և ապահովել անհրաժեշտ պայմաններ,

- ներդնել աշակերտների ստեղծագործական, հետազոտական և նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ՝ ուղղված ինչպես աշակերտներին, այնպես էլ մանկավարժներին:

➢ Առողջ ապրելակերպ

Դպրոցում «Առողջ ապրելակերպի» կրթության հայեցակարգի համաձայն, հարկավոր է.

- օգտագործելով դպրոցի մարզադահլիճի հնարավորությունները՝ խթանել մարզական միջոցառումների իրականացումը և ապահովել սովորողների ներգրավումը,
- համագործակցել մարզական տարբեր ակումբների հետ և, սովորողների նախասիրությունները հաշվի առնելով, դպրոցում հիմնել սպորտային խմբակներ,
- կազմակերպել եւ մասնակցել միջդպրոցական, միջհամայնքային և հանրապետական մրցումների,
- հանդիպումներ անցկացնել հայտնի մարզիկների մասնակցությամբ:

**Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.**

Սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Դպրոց-ծնող-ընտանիք-համայնք համագործակցությունը համարվում է ուսումնական հաստատության գործունեության բարելավման կարևոր գործոն:

Անհրաժեշտ է էլ ավելի զարգացնել դպրոցի, աշակերտների և մանկավարժների կապը համայնքի, համայնքում գործող պետական և մասնավոր հիմնարկների և կազմակերպությունների հետ՝ ներգրավելով նաև ծնողներին, ապահովել աշակերտների, նրանց ծնողների եւ ուսուցիչների մասնակցությունը համայնքային մշակութային, մարզական և կրթական միջոցառումներին:

Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է ծնողների և ընտանիքի կողմից երեխայի հանդեպ ուշադրությունը, հոգածությունը և խնամքը, ներառյալ՝ ուսումնական հաստատություն երեխայի կանոնավոր հաճախումն ապահովելը: Համագործակցությունը համայնքի հետ նպատակ է հետապնդում ակտիվացնել ծնողխորհրդի գործունեությունը: Ստորև ներկայացված գծապատկերը արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:




## *4 . Նպատակների և խնդիրների սահմանումը.*

**Զարգացման ծրագրի նպատակն է՝**

1. Ձևավորել համակողմանիորեն զարգացած ՀՀ քաղաքացի .
2. Ապահովել ՀՀ զարգացման առաջնահերթությունից բխող կրթություն.
3. Ձևավորել հասարակությանը պիտանի և ազգային ուրույն մտածելակերպով անհատներ.
4. Աշակերտների մոտ զարգացնել ազգային արժեհամակարգ.
5. Կրթական միջավայրի բարելավում, արդիականացում.
6. Նյութատեխնիկական բազայի համալրում, արդիականացում.
7. Ուսումնական գործընթացի կազմակերպման որակի բարձրացում.

8. Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում.

9. Ուսուցիչ-ծնող-աշակերտ-համայնք ներդաշնակ համագործակցության ամրապնդում.

10. Ուսումնադաստիարակչական ասպարեզի կատարելագործում. արտադպրոցական դաստիարակության խթանում, կրթության կազմակերպում, մասնագիտական կողմնորոշման նախապատրաստում զարգացում:

*Խնդիրները՝*

1. Տարբեր գործիքների կիրառմամբ հայտնաբերել առաջիկա 5 տարիների զարգացման առաջնահերթություններն ու դրանցից բխող քայլերը.

2. Ներքին նորմատիվ ակտերի մշակում կամ վերաձևակերպում՝ ելնելով առաջիկա հինգ տարիների առաջնահերթություններից.

3. Ռազմավարական ուղղությունների գործողությունների մշակում, ինչը կապահովի կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը.

4. Համայնքի կարիքներից և արդի կրթության չափորոշչային պահանջներից բխող կրթության կազմակերպում.

5. Արդի կրթական պահանջներին համապատասխան ուսումնանյութական պայմանների ապահովում.

6. Ուսումնական գործընթացի կազմակերպման որակի բարձրացում.

7. Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում.

8. Դաստիարակչական գործընթացի կազմակերպում, արտադպրոցական դաստիարակության խթանում, կազմակերպում, մասնագիտական կողմնորոշման նախապատրաստում.

9. Հայրենասիրական դաստիարակություն.

10. Մշակութային-ստեղծագործական զարգացոմ.

## *6. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.*

## *5 .Պատասխանատուները*

| *Իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ* | *Իրականացման ժամանակացույցը* | *Պատասխանատուներ* |
|---|---|---|
| Ուսումնասիրել չափորոշչային նոր պահանջները, անցկացնել փորձի փոխանակում, իրականացնել փոխադարձ դասալսումներ | 2023-2028թթ<br>շարունակական | Դպրոցի տնօրինություն, փոխտնօրեններ, ՄՄ նախագահներ, ուսուցիչներ |
| Համակողմանիորեն զարգացած ՀՀ քաղաքացի ձևավորելու համար ավելացնել այցելությունները զանազան մշակութային օջախներ, կազմակերպել հանդիպումներ մշակութային գործիչների և տարբեր ՀԿ-ների հետ | 2024թ-ի հոկտեմբերից սկսած<br>շարունակական | Ուսուցիչներ, դասղեկներ, Ծնողական համայնք, |
| Արդի սոցիալ-քաղաքական պայմաններում, կրթության առաջնահերթությունից բխող շենքային պայմանների բարելավում՝ հարմարեցնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողների պահանջներին,ստեղծել թեքահարթակներ: | 2024-2028թթ | Տնօրինություն, Լիզոր մարմին, հովանավորներ |
| Հրաձգարանի համար նախատեսել տարածք, գտնել հովանավորներ | 2025-2028թթ | Դպրոցի տնօրինություն |

| | | |
|---|---|---|
| Ընթերցասրահի ստեղծում, կահավորում՝ դիմելով ՏԻՄ-ին, Ծնողական համայնքին | 2024-2026թթ շարունակական | ՏԻՄ, տնօրինություն, Ծնողական համայնք |
| ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական կարիքները բարելավելու համար , համալրել դիդակտիկ պարագաները և մշակել համապատասխան գործողություններ, դիմել Լիազոր մարմնին | 2024-2025 թթ | Տնօրինություն, Լիզոր մարմին, հովանավորներ |
| Աջակցել ուսուցչական անձնակազմի շարունակական կատարելագործմանը | 2023-2028թթ շարունակական | Դպրոցի տնօրինություն, ուսուցչական համակազմ |
| Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ նախագծային ուսուցման, ուսումնա-հետազոտական աշխատանքների անցկացման վերաբերյալ: | 2023-2028 շարունակական | Դպրոցի ուսուցչական համակազմ |
| Կահավորել համակարգչային դասարանը,ավելացնել նոր սերնդի համակարգիչներ կազմակերպել վերապատրաստումներ ՏՀՏ գործիքների կիրառման համար | 2024-2028 շարունակական | Դիմել Լիզոր մարմին , գտնել հովանավորներ |
| Ձեռք բերել առնվազն մեկ էլեկտրոնային գրատախտակ | 2024-2026թթ շարունակական | Դիմել Լիզոր մարմին , գտնել հովանավորներ |
| Իրականացնել դասասենյակների կոսմետիկ վերանորոգում և գույքի ձեռքբերում | 2024-2028թթ շարունակական | Դպրոցի տնօրինություն |

## 7. *Արդյունքների գնահատման չափանիշները.*

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

Դպրոցը պետք է ձգտի, որ՝

- դասասենյակները և առարկայական կաբինետները լինեն վերանորոգված և կահավորված նոր գույքով,
- ապահոված լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
- դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
- դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ):
- Հիմնական դպրոցում աշակերտին հնարավորություն տալ մասնագիտական կողմնորոշման՝ ավելացնելով խմբակների քանակը:

Ծնողների և երեխաների սոցիալական պատկերը պետք է նկարագրվի դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլվի ուսումնական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում: Այս պահանջը դրված է նաև ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հիմքում: Դրա արդյունքում աշակերտները կունենան ուսումնական հաջողություններ, որոնք տոկոսային հարաբերությամբ ներկայացվում են դպրոցի ներքին գնահատման ժամանակ:

Դպրոցի ուսումնական պլանը դպրոցի հիմնարար փաստաթղթերից է, որը ապահովում է դպրոցի կողմից պետական և հանրային պատվերի կատարումը: Դպրոցի ուսումնական պլանը պետք է կազմվի՝ ըստ սովորողների և ոչ թե ուսուցիչների կարիքների: Այս առումով կարևորում ենք ուսումնական պլանի համապատասխանեցումը դպրոցում սովորողների կարիքներին: Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի ռազմավարական կարևորագույն խնդիրն է, քանզի կրթության գերնպատակն անձի անհատականության կայացումն է:

Դպրոցը պետք է հետևողական աշխատանք կատարի սովորողների արժեհամակարգի ձևավորման ուղղությամբ՝

- ծնողների ուսուցում կազմակերպելով,
- առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը,
- արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ուղղվածություն տալով,
- ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,
- ծնող-դպրոց կապը հզորացնելով:

## *8. Ռիսկերը.*

Հաշվի առնելով դպրոցի զարգացման ներկայիս կայուն փուլը՝ ծրագրի իրականացման ռիսկերը նվազագույն են, բացառությամբ հետևյալ իրավիճակների.

- ֆորսմաժորային իրավիճակներ,
- արտակարգ և պատերազմական իրավիճակներ, սեյսմիկ, բնական աղետեր, համավարակ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ,
- պետական ֆինանսավորման նվազեցում կամ դադարեցում,

- աշակերտների թվի հնարավոր նվազում արտագաղթի և ծնելիության նվազման հետ կապված

Ռիսկերի նվազեցման ուղղությամբ մտադիր ենք իրականացնել ծախսերի վերլուծություն և կանխատեսում, միջոցների տնտեսում, կոմունալ և այլ ծախսերի նվազեցում:

## 9. *Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.*

Իրականացնել նյութատեխնիկական բազայի համալրում, արդիականացում:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ:

Համակարգչային կաբինետի վերազինում, համակարգիչների և էլեկտրոնային գրատախտակների, ժամանակակից լաբորատոր սարքավորումների և գույքի ձեռքբերում, բնագիտական առարկաների կաբինետների՝ համապատասխան պայմաններով ապահովում, աշակերտական, ուսուցչական և մարզական գույքի ձեռքբերում, գրադարանի համալրում գեղարվեստական և մասնագիտական գրականությամբ, հանդիսությունների դահլիճի գույքի և երաժշտական սարքավորումների արդիականացում:

## *10. Վերահսկողության մեխանիզմները:*

Դպրոցում կրթության որակի ամենակարևոր նախապայմաններից մեկն օբյեկտիվ և համակարգված վերահսկողության իրականացումն է: Ծրագրի բովանդակության մեջ առաջադրված խնդիրները լուծելու և կրթական գործընթացը դպրոցում ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է մշտապես առաջնորդվել ՀՀ օրենքներով և դպրոցին առնչվող իրավական ակտերով: Ներկայացված ծրագիրը նախնական է, որը կարող է ենթարկվել փոփոխությունների: Այս ծրագրի յուրաքանչյուր կետ պետք է քննարկվի դպրոցի աշխատակազմի հետ և միասնական հավանության արժանանալուց հետո իրականացվի: Ծրագրի իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ եմ համարում տարին առնվազն երկու անգամ դպրոցի կառավարման խորհրդի անդամների, դպրոցի տնօրենության, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, ծնողական խորհրդի մասնակցությամբ կազմակերպել խորհրդակցություն և 30 քննարկումներ, որոնց ընթացքում կքննարկվեն ծրագրի առաջնային կարևորություն ունեցող դրույթները և կընդունվեն համապատասխան որոշումներ՝ հետագա աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար: Մեծապես կարևորելով դպրոցի տնօրենի պաշտոնը, լիազորություններն ու պարտականությունները, պատասխանատվության աստիճանը՝ ընտրվելու դեպքում կառաջնորդվեմ դպրոցի ղեկավարման ժողովրդավարական սկզբունքներով, նպատակային հետևողական գործելակերպով, կբարձրացնեմ կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով դպրոցի զարգացման ծրագրի իրականացումը: Խորապես համոզված եմ, որ դպրոցի տնօրենը ժամանակակից ուսումնական հաստատությունում ուսուցիչների ղեկավարն է, թիմի առաջնորդը, միևնույն ժամանակ կրթության գործընթացի բոլոր մասակիցների գործընկերը:

«ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԳՈՐԳԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 158 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ »

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ՍՈՆԱ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ

2023-2028 թվականների

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ




ԵՐԵՎԱՆ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Հաստատության գործունեությունը

ա) Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

2.1 Հաստատության շենքային պայմաններ

2.2 Հաստատության նյութատեխնիկական բազան

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

2.5 Հաստատության շենքային պայմանները

2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ

2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը

2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները

2.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները

2.10 Առաջադիմություն

2.11 Աշակերտների թիվ

3-8 բաղադրիչներն ընդգրկված են ներքոնշյալ Ձև 1-ում

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Ոլորտ 3. Մանկավարժական համակազմ

Ոլորտ 4. Աշակերտական համակազմ

Ոլորտ 5. Ծնողական համակազմ

Ոլորտ 6. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ոլորտ 7. Ուսումնական միջավայր

Ոլորտ 8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Ոլորտ 9. Տեխնոլոգիաներ և հնարավորություն

Ոլորտ 10. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

9. Ակնկալվող արդյունքներ

10. Վերահսկողության մեխանիզմներ

11. Եզրափակում

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետականհանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին» հրաման N35-Ն պահանջներին համապատասխան:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Կրթությունն ամենահզոր զենքն է,**
**որը դու կարող ես օգտագործել աշխարհը**
**փոխելու համար:**

ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

Դպրոցը յուրաքանչյուր մարդու «սկիզբն է»: Այն կրթական գործընթացի և անհատականության զարգացման սկզբնական քայլն է: Դրա հիմնական խնդիրն է սովորողին տալ գիտելիքներ և հմտություններ, որոնք թույլ կտան նրան սկսել ինքնուրույն կյանք: Այսօրվա աշխարհը արագորեն փոխվում է, ուստի հասարակությունը ավելի շատ պահանջներ է ներկայացնում ժամանակակից դպրոցին, որովհետև կիրթ սերունդը կիրթ հասարակության արմատն է:

Իսկ կիրթ հասարակությունը պետության զարգացման ամենակարևոր նախապայմաններից է: Այն երկրներն են հաջողակ, որտեղ ձևավորված է կիրթ սերունդ: Այդ իսկ պատճառով մենք պետք է գիտակցենք, թե ինչ մեծ պատասխանատվություն ունենք. Չ՞է որ , յուրաքանչյուր սերնդի կրթության և դաստիարակության մեջ իր առյուծի բաժինն ունի դպրոցը՝ լավ դպրոցը: Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ուստի այն պետք է բավարարի յուրաքանչյուրին և ողջ հասարակությանն ու պետությանը: Իսկ այդ հավաքական ամբողջության հիմնաքարը դպրոցն է: Այն մի վիթխարի ուժ է, որը որոշում է ժողովուրդների, պետությունների ներկան ու ապագան: Այն կրթադաստիարակչական դարբնոցն է, որտեղ ձևավորվում է աճող սերնդի միտքը: Յուրաքանչյուր հայի համար դպրոցը մեծ արժեք է :

**Դպրոցի զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է՝կազմված հետևյալ բաղադրիչներից.**

1) հաստատության գործունեությունը.
2) իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.
3) նպատակների և խնդիրների սահմանումը.
4) սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.
5) պատասխանատուները.
6) արդյունքների գնահատման չափանիշները.
7) ռիսկերը.
8) գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.

**Սույն ԴԶԾ-ն մշակելու համար կատարել եմ հետևյալ հաջորդական քայլերը**

1. Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարել եմ գործունեության պլանավորում: Մանկավարժության մեջ ընդունված է, որ դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար պետք է բաժանել փուլերի՝

ա) դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրի նպատակների և խնդիրների սահմանում,

բ) ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում,

գ) ծրագրերի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում:

2. սահմանել եմ դպրոցի առաքելությունը,
3. վերլուծել եմ առկա իրավիճակը, նշել եմ ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել եղած հիմնախնդիրները
4. սահմանել եմ զարգացման հիմնական նպատակներն ու դրանցից բխող խնդիրները,
5. սահմանել եմ դպրոցի զարգացման գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
6. ձևակերպել եմ ծրագրի ակնկալվող արդյունքները:

Զարգացման ծրագրի հենասյունը ժամանակակից դպրոցի պահանջներն են .սովորողների համար ազգային հիմքի վրա հիմնված որակյալ, մատչելի, բոլորին հասանելի կրթություն ապահովելը՝ նպաստելով բազմակողմանիորեն զարգացած, հայրենասիրական և մարդասիրական ոգով դաստիարակված կարողունակ քաղաքացիների ձևավորմանը: Այդ քաղաքացիները կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և 21-րդ դարի լիիրավ , գրագետ քաղաքացիներ:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է `

- Ձևավորել սովորող և սովորեցնող անձ, ով կիրառում է ստացած գիտելիքները` որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք

- Աշակերտներին տալ այնպիսի հիմնարար գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորել և աշխատել կյանքի տարբեր բնագավառներում: Իսկ այդպիսի սերունդը հստակ ճանաչում է իմացածի և չիմացածի սահմանները:

- Սովորողի մոտ ձևավորել այնպիսի անձնային որակներ, որոնք կկարողանան ապահովել սովորողի շարունակական ուսումը,նրա ներքին պահանջը սովորել սովորելու:

- Ստեղծել նպաստավոր և տրամադրող պայմաններ հետազոտական գործունեության համար,

- Նպաստել սովորողների հաղորդակցական հմտությունների ձևավորմանը, թվային և մեդիա կարողունակությունների զարգացմանը:

- Նպաստել սովորողների ինքնաճանաչմանը : Այդիսի սերունդը ձևավորում է վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում է դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև կատարել մասնագիտական ճիշտ կողմնորոշում:

- Ձևավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությամբ սերունդ: Նման սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը:

- Երաշխավորել սովորողների ազատությունը: Արդյունքում սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն:

- Հաշվի առնել սովորողի նախասիրություններն ու կարողությունները:Խթանել դրանց զարգացմանը

- Ձևավորել մշակութային կարողունակություն, որպեսզի սովորողները ճանաչեն հայ և համաշխարհային մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների բաղադրիչները` որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ:

- Ձևավորել տնտեսական կարողունակություն. աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Թվում է, թե բոլոր դպրոցները պետք է ունենան նույն առաքելությունը. այն է՝ կրթել երեխաներին: Սակայն դա այդպես է միայն ընդհանուր առմամբ: Չէ՞ որ յուրաքանչյուր դպրոցի դերն ու նշանակությունը ձևավորվում են միայն իրեն հատուկ առանձնահատկությունների շնորհիվ: Մասնավորապես **«Երևանի Մովսես Գորգիսյանի անվան հ.158 հիմնական դպրոց ՊՈԱԿ»** -ի հեղինակության բարձրացումը, կրթության բարեփոխումների, ինչպես նաև դպրոցի մանկավարժական աշխատակազմի ուժերի նկատմամբ վստահության վերականգնումը դիտարկում եմ դպրոցի առաքելության բաղկացուցիչներից մեկը, ինչը այս հնգամյակում պետք է կատարվի քայլ առ քայլ: Կձոորոշ եմ համարում դպրոցում առկա, ստեղծագործական կարողություններով օժտված մանկավարժական կադրերի աշխատանքի խթանումը, մյուսների ընթացիկ վերապատրաստումը, հզոր ներուժով երիտասարդ, կրթված և հմուտ ուսուցիչների ներգրավումը ուսումնադաստիարակչական աշխատանքներում՝ ապահովելով սերնդափոխության սահուն ընթացքը:

Ստորև ներկայացնում եմ դպրոցի առաքելության մի շարք օրինակներ.

- կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ձևավորում,
- յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ անհրաժեշտ ուշադրության ապահովում:
- այնպիսի պայմանների ստեղծում, որտեղ յուրաքանչյուր սովորող որոշակի ոլորտում կարող է ինքնահաստատվել և դառնալ հաջողակ,
- համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորում,
- դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել սովորական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև և օժտված երեխաները,
- յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը,
- օժտված երեխաների տարբերակված, խորացված ուսուցման կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- օտար լեզուների խորացված ուսուցման միջոցով համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր քաղաքացու ձևավորում.
- ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորում, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական, վերլուծական մտածողության անհատական ունակությունների զարգացումը,

- ուսուցիչը՝ որպես որակյալ կրթության հիմնական գրավական, պետք է լինի նվիրված, հոգատար, սրտացավ, ծով համբերությամբ և հանդուրժողականությամբ օժտված, ինքնակատարելագործման ձգտող: Նա պետք է իր մասնագիտական որակավորմամբ համապատասխանի մերօրյա գիտելիքների և իմացության պահանջվող չափանիշներին:

Ծրագրի մշակման ձևաչափը ներկայացված է Ձև 1-ում

## 1. Հաստատության գործունեությունը

Այս բաղադրիչը տալիս է երեք կարևոր հարցերի պատասխաններ՝

1. Կրթական կարիքները
2. Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.
3. Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

## ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Իրավաբանական տեսակը- Ոչ առևտրային

Լիցենզիա ՝ հանրակրթական ծրագրի իրականացման

Տարրական կրթութական գործունեության - N 1023 / համակազմի սահմանային 200տեղով/


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ
№ 1023
ՍՈՒՅՆՈՎ ՎԱՎԵՐԱՑՎՈՒՄ Է, ՈՐ
ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՈՐՈՇ(ՆԵՐ)ՈՒՄ, ՍՈՒՅՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՎ ՆՈՐՄԱՑՈՒՅՑՆԵՐԻՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ (ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ, ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ) ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
Կ.Տ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ
№ 1022
ՍՈՒՅՆՈՎ ՎԱՎԵՐԱՑՎՈՒՄ Է, ՈՐ
ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՈՐՈՇ(ՆԵՐ)ՈՒՄ, ՍՈՒՅՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՎ ՆՈՐՄԱՑՈՒՅՑՆԵՐԻՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ (ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ, ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ) ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
Կ.Տ.

Հիմնական ընդհանուր կրթության գործունեության ՝- N 1022 / համակազմի սահմանային300 տեղով:

***Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողի հետևյալ կրթական կարիքները.***

- Հայրենասեր և ազգասեր
- Բազմակողմանիորեն զարգացած
- Համամարդկային արժեքներ կրող
- Սեփական դիրքորոշում ունեցող
- Մասնագիտորեն կողմնորոշված
- Մրցունակ և ժամանակին համահունչ քայլող:

*Եթե կրթական միջավայրը բարենպաստ է, ապա ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով անպայման կձևավորվի 21-րդ դարի կարողունակ այն սերունդը, որը հետո դառնալու է մեր պետության կառուցող, զարգացնող, երկիրը տարբեր հարթակներում գերազանց և մրցունակ ներկայացնող քաղաքացի:*

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին,համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

*Դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը: Դպրոցը բաց գիտակցում է իր առջև դրված բոլոր մարտահրավերները և ձգտում է անել ամեն ինչ , որպեսզի իր տված կրթությունը համապատասխանի պետության կրթական քաղաքականությանը և շահառու խմբերի կարիքներին:*

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

## Հաստատության ենթակառուցվածքներն ու հնարավորությունները.

Դպրոցի հիմնադիրը  Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (հետայսու հիմնադիր) :Ունի վարչական աշխատասենյակներ, ուսուցչանոց, առարկայական դասասենյակներ, բնագիտական առարկաների լաբորատորիաներ, համակարգչային դասասենյակ, ՆԶՊ առարկայի դասասենյակ և զենքի պահեստ, , մարզադահլիճ, սպորտհրապարակ, հանդիսությունների սրահ, բուժկետ, պահակակետ, հարմարեցված սանհանգույցներ, գրադարան և ընթերցասրահ, համացանցի առկայություն: Գործում է հրդեհազդարարման ինքնաշխատ և ներքին հրդեհաշիջման համակարգ: Առկա է օդափոխության համակարգ, ապահովված է ինտերնետ կապով:

## ***Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին***

***‹‹Երևանի Մովսես Գորգիսյանի անվան  թիվ 158 հիմնական դպրոց ՊՈԱԿ››-ը շահույթ ստանալու նպատակ  չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություն է:***

**Հասցեն՝** *ք. Երևան,Շենգավիթ վարչական շրջան, Շիրակի փողոց, 2-րդ նրբանցք,5 շենք*

**Հաստատության հեռախոսահամարը՝** +374 10 46 04 14

**Էլեկտրոնային հասցեն ՝** 158dproc@mail.ru

**Հաստատության ինտերնետային կայքի հասցեն՝** https://yerevan158.schoolsite.am/

## Մարդկային ռեսուրսներ

Դպրոցն ունի 64 աշխատակից, որոնցից  42-ը՝ ուսուցիչ: Բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը 39 է:
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը 39:  Նրանցից 21-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում են անցել: Ուսուցիչների միջին տարիքը  49 է:

| Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկա/աճ կամ նվազում/ |
|---|---|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 33 | 36 | 37 | 42 | աճ |
| Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 19,8 | 19,1 | 19,3 | 19,5 | Առանց էական փոփոխության |

1. բարձրագույն մասնագիտական կրթություն-39
2. 1-5 տարվա աշխատանքային փորձ –6
3. 5-10 տարվա աշխատանքային փորձ – 4
4. 15-ից ավել տարվա աշխատանքային փորձ – 32
5. Պարտադիր ատեստավորում անցած –
6. Մասնագիտական վերապատրաստում անցած –42
7. Համատեղող ուսուցիչներ - 4

Միջազգային ու հանրապետական պարբերականներում/ամսագրերում հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային ու այլ աշխատություններ ունեցող ուսուցիչներ չկան: 2023-2028 թթ. դպրոցի խնդիրն է նպաստել բոլոր ուսուցիչների տարակարգ ձեռք բերելուն, գիտելիքների ստուգման կամավոր ատեստավորմանը մասնակցելուն:

## Խորհրդակցական մարմիններ

Դպրոցն ունի կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կանոնադրությունը, աշխատանքային պլանը, գործում է օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված իր իրավասությունների սահմաններում:

Խորհրդի բոլոր անդամները մասնակցում են դպրոցի կառավարման աշխատանքներին, մտահոգված են դպրոցի ներկա խնդիրներով ու ապագայով, բարեխղճորեն մասնակցում են նիստերին, քննարկում բազմաթիվ կազմակերպչական հարցեր: Խորհուրդը հետևողական է, տնօրինության կողմից ներկայացված ֆինանսական, ուսումնադաստիարակչական հաշվետվությունները քննարկում և կայացնում է հիմնավորված որոշումներ:

# 2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

## Ուժեղ կողներ

- ՈՒսումնական գործընթացի նպատակների և խնդիրների հստակ սահմանում:
- Ուսումնական արդյունքների բարելավում (ավարտական քննությունների արդյունքներ):
- Կրթական գործընթացի կատարողականի լավ ցուցանիշ:
- Նորարարական մեթոդների լայն կիրառում:
- Ուսումնական գործընթացների, միջոցառումների բարձր որակ:
- Առարկայական միամսյակների անցկացում:
- Խիստ բարձր ցուցանիշներով մշտադիտարկում (հայտորոշիչ թեստեր, գրավոր աշխատանքներ տնօրինության կողմից, դասալսումներ, քննարկումներ,մենթորության պրակտիկա և այլն:
- դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների առկայություն (64 %)
- ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ կիրառող ուսուցիչներ(88%)

## Թույլ կողմեր

- Նախագծային ուսուցման ոչ բավարար հմտություններ:
- Բազմատեսակ կրթական ռեսուրսների անհասանելիություն:
- Մանկավարժի և դպրոցի նկատմամբ սխալ կարծրատիպերի ձևավորում հասարակության շրջանում:
- Բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրության պակաս:
- Տարակարգ ունեցող ուսուցիչների բացակայություն
- Ուսուցիչների մոտ ՏՀՏ կարողությունների զարգացման կարիք:
- Որոշ ուսուցիչների կողմից ժամանակակից մեթոդների ոչ բավարար կիրառում:
- Փոխադարձ դասալսումների ոչ բավարար հաճախականություն:
- Նորամուծությունների նկատմամբ առկա է մանկավարժների հետաքրքրության պակաս:
- Կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն
- Հեռավար կրթության հարթակների և գործիքների գերազանց իմացություն ուսուցիչների իմացության կողմից:

# երլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

## Հաստատության շենքային պայմաններ

### Ուժեղ կողմեր

Դպրոցը կառուցվել է 1973 թվականին: 1990 թվականին անվանակոչվել է ՀՀ ազգային հերոս Մովսես Գորգիսյանի անունով:

Դպրոցն ունի լուսավոր, ընդարձակ և հարմարավետ շենքային պայմաններ՝2 հարկանի տիպային քարե շինություն է՝ 7 մասնաշենքերով: Ունի 27 դասասենյակ, այդ թվում՝ համակարգչային, օտար լեզուների, ՆԶՊ կաբինետներ, ունի առանձնասենյակներ՝ ընդունարան, տնօրենի, փոխտնօրենի , հաշվապահի աշխատասենյակներ, բուժկետ, պահակատուն, քիմիա,ֆիզիկա և կենսաբանության լաբորատորիաներ, հոգեբանի սենյակ: Բոլոր կաբինետներն ու սենյակները մասնակի ձևավորված են և կահավորված նոր գույքով:

Դպրոցն ունի սպորտհրապարակ, հանդիսությունների դահլիճ և մարզադահլիճ՝ ապահովված հանդերձարաններով, մարզիչի (ուսուցչի) սենյակով:

Դպրոցն ունի ճաշարան:

Դպրոցն ունի նկուղային հարկ, որը մասնակի վերանորոգված է և լիարժեք կարող է ծառայել որպես ապաստարան:

Դպրոցն ապահովված է լոկալ (գազի) ջեռուցման համակարգով, ունի կաթսայատուն, ապահովվածէ եռաֆազ հոսանքով, առկա են տարահանման ելքեր, տեխնիկական նշանակության սենյակներ:

Դպրոցի տարածքն առանձնացված է ցանկապատով, կանաչապատված նասֆալտապատ է:

Դպրոցն ունի 10 գործող սանհանգույց, որոնք առանձնացված են տղաների և աղջիկների համար:

Դպրոցի շենքի պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործմաննորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:

Հաստատության շենքը կայուն է վտանգների ազդեցությանը՝ ուժեղ քամիներ, հրդեհներ, խոնավություն և այլն,

Հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին.

- շենքում առկա են դեպի դուրս բացվող 3 պահուստային ելքեր,

### Թույլ կողմեր

Դպրոցը կարիք ունի՝

- Դպրոցի շենքը կառուցվել է 1973թ. և մինչ օրս հիմնավերանորոգման ենթարկվել է մասնակի: Տարիների ընթացքում կատարվել են կոսմետիկ շինարարական աշխատանքներ:
- Դպրոցի բակը դեռևս ունի կանաչապատելու կարիք:
- Տեսախցիկների պահանջ:
- Զինանոցը ապահովվածչէ ձայնային ազդանշանով:
- Դպրոցի տարածքը ապահովված չէ ջրահեռացման համակարգով:
- Խոհանոցը ապահովված չէ

| | |
|---|---|
| • հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով,<br>• բոլոր դռները լայն են և հարմարավետ ԿԱՊԿՈՒ աշակերտների տեղաշարժման համար,<br>• հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով ,դպրոցի տանիքը պատված է հրակայուն նյութերով,<br>• դպրոցի միջանցքների հատակները սայթաքուն չեն, | ջեռուցման սարքերով:<br><br>➢ Դպրոցը չունի ապաստարան:<br>➢ սեյսմակայունությունն ամրապնդելու կարիք ունի:<br>Մուտքի մոտ և շենքի մեջ առկա չեն թեքահարթակներ: |

# Հաստատության նյութատեխնիկական բազան

| Ուժեղ կողներ | Թույլ կողմեր |
|---|---|
| 2020-2022 թթ պետբյուջեի տնտեսումների հաշվին ձեռք են բերվել աշակերտական գույք, գրասենյակային և տնտեսական գույք՝ Դպրոցն ունի բնագիտական առարկաների լաբորատորիաներ՝ համապատասխան նըութերով, դիդակտիկ պարագաներով և սարքավորումներով: Հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործնունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է: | Դպրոցը կարիք ունի՝<br>➢ Ժամանակակից էլեկտրոնային գրադարան:<br><br>➢Էլեկտրոնային գրադարանի ստեղծման և արդիականացման (էլեկտրոնային ուսումնական նյութեր և գրականություն QR կոդերով):<br><br>➢Խոհանոցային սարքավորումների թարմացմանն համալրման:<br><br>➢գրադարան՝ գեղարվեստական գրականությամբ հագեցված:<br><br>➢Դպրոցը չունի անհատական պաշտպանության միջոցներ (հակագազ, շնչադիմակ):<br>➢Նոր սերնդի համակարգիչներ:<br>➢Բուֆետը համալրված չէ ժամանակակից սարքավորումներով: |

# Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

## ՈՒԺԵՂ ԿՈՂՆԵՐ

Կառավարման խորհուրդը մշտապես գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրագործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

Մանկավարժական խորհուրդը համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Խորհուրդը ձևավորված է 39 մանկավարժներից: Բոլորն ունեն բարձրագույն մասնագիտական որակավորում և ատեստավորված են:

Աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացնում են հանդիպումներ սովորողների հետև լուծում տալիս խնդիրներին:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Սերտ համագործակցում է դպրոցի հետ: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների աջակցությամբ կազմակերպում է բազմաթիվ էքսկուրսիաներ և միջոցառումներ, այցելություններ դեպի թանգարաններ և այլ մշակութային հաստատություններ:

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ և շրջանավարտների խորհուրդ:
- Հանրապետական և միջազգային գիտաժողովներին, սեմինարներին վեբինարներին ցածր մասնակցություն:
- Մանկավարժներից և ոչ մեկը չունի տարակարգ
- Կամավոր ատեստավորման դիմողների բացակայություն
- Պասիվություն տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին:

Դպրոցի իրականացրած երեխայի խնամքի և դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներին ծնողների քիչ թվով մասնակցություն:

## Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Դպրոցն համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Երևանի քաղաքապետարանի՝ որպես լիազոր մարմին, ԿՋՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, գրադարանների, իրավապահ մարմինների, «Ինտերակտիվ» կրթության զարգացման հիմնադրամի, դպրոցի շրջանավարտների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: | ➢ Կրթության ոլորտով հետաքրքրվողների համագործակցության և ներգրավվածության պասիվություն:<br>➢ Հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի բացակայություն:<br>➢ Համագործակցության պասիվություն ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզային կամ այլ երկրների դպրոցների հետ: |

# Հաստատության ուսումնական միջավայրը

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| 1. Ուսումնական միջավայրը լուսավոր է, ընդարձակ, հարմարավետ, կահավորված միջանցքներով, ապահովված են սովորողների առողջության և անվտանգության պահպանման բոլոր նորմերը, պահպանված է միջավայրի հավասարություն ու հասանելիությունը սովորողներիհամար: Բոլոր դռները լայն են և հարմարավետ ԿԱՊԿՈՒ աշակերտների տեղաշարժման համար,<br>2. Բոլոր դասասենյակները ապահովված են համապատասխան գույքով,<br>3. հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:<br>4. Հաստատության անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:<br>5. Հաստատության անձնակազմը և սովորողները տեղեկացված են դպրոցում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին:<br>6.Տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ հաստատությունում իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ:<br>7.Հաստատությունում առկա է աղետների պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանվածության պլան և ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են պլանի գործարկում և վարժանքներ, վարվում է գրանցամատյան:<br>8.Հաստատությունն ապահոված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով:<br>9.Հաստատության բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցման | ✓ Դասասենյակները մասնակի են վերանորոգված:<br>✓ Աշխարհագրության, կենսաբանության,քիմիայի լաբորատորաները, ինֆորմատիկայի , օտար լեզուների լինգաֆոնային կաբինետը, փայտամշակման արհեստանոցը, սպորտդահլիճը, կարիք ունեն վերանորոգման և համապատասխան ուսումնական նյութերով համալրման,<br>✓ Օտար լեզուների կաբինետը կարիք ունի տեխնիկական վերազինման: |

ապահովող մարտկոցներ և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

10.Հաստատության միջանցքները ջեռուցվում են և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

11.Հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:

12.Հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և ապահովված են հիգիենայի պարագաներով (օճառով, թղթով և այլն):

13.Հաստատությունում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին:

14.Հաստատությունում առկա է բուժկետ, և անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրվել առաջին բուժօգնությունը:

15.Դպրոցի ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, պատմության համակարգչային և օտար լեզուների կաբինետները հագեցված են բավարար չափով:

# Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ապահովող միջոցառումներ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| Ուսուցիչների մեծ մասը ՏՀՏ է կիրառում դասապրոցեսին, կազմակերպում փորձի փոխանակում դպրոցի և այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ:<br>Դպրոցում անցկացվում են բարձր որակի ռազմահայրենասիրական միջոցառումներ և դասեր:<br>Ուսուցիչներն ունեն ակտիվ մասնակցություն համայնքի մենթոր դպրոցի կողմից կազմակերպվող սեմինարին, մեծ պատրաստակամություն մասնակցելու ԿԶՆԱԿ-ի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող խորհրդակցություններին, սեմինարներին, վեբինարներին:<br>Տնօրենի և փոխտնօրենի առաջարկով հայտորոշիչ և ձևավորող գնահատում իրականացնելու համար ուսուցչական ողջ անձնակզմի միմյանց հետ խորհրդատվություններ կազմակերպելու առողջ մթնոլորտի առկայություն:<br>2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում, նորչափորոշչի ներդրմամբ պայմանավորված , (տնօրենի առաջարկով ) Տավուշի մարզի որևէ դպրոցի անձնակազմի հետ պարբերաբար հեռավար հանդիպումների կազմակերպում՝ փորձի փոխանակման համար: | ➢ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին, տարակարգի և կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկության պասիվություն:<br>➢ Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների սակավ թիվ:<br>➢ Կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչների բացակայություն:<br>➢ Տարակարգ չունեցող ուսուցիչներ:<br>➢ Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների բացակայություն:<br>➢ Միջազգային ու հանրապետական պարբերականներում/ամսագրերում հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային ու այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների բացակայություն: |

# Հաստատության տրամադրած կրթության որակը

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| ✓ Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար իրավունքը: Լուրջ աշխատանք է կատարում ուսման որակը բարելավելու,աշակերտների կարողությունները, հմտությունները, արժեքային համակարգը և դիրքորոշումը զարգացնելու, առողջության պահպանման և անվտանգ կենսագործունեությունը և ռազմահայրենասիրական, հայրենասիրական, բարոյական դաստիարակությունն ամրապնդելու համար:<br>✓ Առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները խոսում են ուսման որակի բարձր որակի մասին:<br>✓ Դպրոցը մասնակցություն է ցուցաբերում տարածքային և մարզային օլիմպիադաներին,<br>✓ Մարզային և հանրապետական սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթների մասնակիցների թիվն աճում է:<br>✓ Դպրոցում կազմակերպվում են դասարանական, արտադասարանական, արտադպրոցական բազմաթիվ նպատակային միջոցառումներ, որոնք զարգացնում են սովորողի ճանաչողական ակտիվությունը, գեղագիտական ճաշակը, մշակութային զարգացածությունը, հայրենասիրական դաստիարակությունը: Դպրոցի առաքելությունը իր սովորողների ազգային հենքի վրա որակյալ, մատչելի, կրթություն տալն է՝ ապահովվելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք էլ հետագայում կկարողանան անցնել աշխատանքի՝ գտնելով իրենց տեղը կյանքում: | ➢ Միջազգային օլիմպիադաներին մասնակցության պասիվություն:<br><br>➢ Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության սակավություն:<br><br>➢ Բացառիկ կարողություններով աշակերտների սակավություն: |

| Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| ✓ Հաստատության խորհրդի և տնօրենի համագործակցություն<br>✓ Կարգի պահանջներին համապատասխան<br>✓ Տնօրենի կողմից ներկայացված բոլոր հաշվետվությունների, նախահաշիվների պատշաճ քննարկում: | |
| Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն | |
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| ✓ Դպրոցում լավ և ստեղծագործ աշխատանքը խրախուսվում է<br>✓ Գործում է պարգևատրման մեխանիզմ<br>✓ Բարձրաձայնվում է աշխատակցի յուրաքանչյուր ձեռքբերում և արժևորվում այն | ✓ Պարգևատրումը՝ որպես ինքնակրթության բարձրացման խթան, թույլ է ներկայացված<br>✓ Չկան խրախուսման և արժևորման այնպիսի հստակ մեխանիզմներ և ձևաչափեր, որոնք աշխատակցին կստիպեն ավելի բարեխիղճ աշխատել<br>✓ Ինքնակրթության արդյունքում հաջողություն գրանցած աշխատակցի փորձը քիչ է վարակիչ դառնում մյուսների համար: |
| | |

## Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության վերլուծություն

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Հաստատության մանկավարժների 90 %-ը մասնակցել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպած 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ-ի ներդրմամբ պայմանավորված վերապատրաստմանը:<br>Կարգով սահմանված ձևաչափով ներկայացվել է հաստատման մի քանի ուսումնական նախագիծ<br>Դասապրոցեսին կիրառվում են ձևավորող գնահատում իրականացնող հնարներ, մեթոդներ<br>Ուսումնական տարվա երկրորդ շաբաթվա ընթացքում 8 և 9 րդ դասարաններում իրականացվել է հայտորոշում ( մնացորդային գիտելիքների ստուգում նախորդ տարվա անցած նյութից ) : | Դասապրոցեսին քիչ են օգտագործվում մեթոդներ և հնարներ, որոնք անհրաժեշտ են նոր չափորոշչով ամրագրված հիմնական դպրոցի շրջանավարտին ներկայացվող վերջնարդյունքները ապահովելու համար, որոնք էլ իրենց հերթին պետք է ձևավորեն սովորողի մոտ անհրաժեշտ կարողունակությունները: |

## Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն՝ դրանց արդյունավետության վերլուությության Ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| ✓ Ուսումնական նպատակով կատարված ծախսերն իրականցվել են գնումների պլանին համապատասխան | |

| Բազմակարծիք , ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| ✓ Մասնագիտական խմբի կոմպիետնտ աշխատանք<br>✓ Սերտ համագործակցություն Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետների հետ<br>✓ Սովորողի անհատական ուսումնական պլանի կազմման համար համակարգված աշխատանք ուսումնական գծով փոխտնօրենի և դասավանդող բոլոր մանկավարժների միջև | Կաիրք կա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու |

